

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

Հակոբյան Վահագն¹

ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1749-1755ԹԹ.-ԻՆՉ

18-րդ դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում³ կիսանկախ կարգավիճակ ձեռք բերեցին Երևանի, Նախիջևանի, Խոյի, Մակուի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի (1765թ.-ից հետո այս խանությանն է միացվում նաև Դերբենդի խանությանը), Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի,

¹ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ, էլ. փոստ՝ vah.hakobyan@gmail.com

² Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող 16A-6a32 ծածկագրով «Երևանի խաների նամականին և Մատենադարանի պարսկալեզու վավերագրերը, որպես Արևելյան Հայաստանի 18-րդ դարի երկրորդ կեսի պատմության սկզբնաղբյուր» գիտական թեմայի իրականացման շրջանակներում:

³ Պարսից մատենագրության մեջ և վավերագրերում «Ազերբայջան» անվան տակ հաճախ նկատի ենունենում այն տարածքները, որոնք համապատասխանում են ժամանակակից Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Իրանի Իսլամական հանրապետության Ատրպատական նահանգի տարածքներին: Անդրադառնալով վերոնշյալ տարածքները «Ազերբայջան» անունով հիշատակելու հարցին Հակոբ Փափազյանը նշում է, որ 15-րդ դարից հետո «Ազերբայջանը» Թավրիզ կենտրոնով, վարչական մի խոշոր միավոր էր, որի մեջ մտնում էր ոչ միայն բուն «Ազերբայջանը» կամ «Ատրպատականը», այլ նաև հին Աղվանքն ու պատմական Հայաստանի Արցախի ու Սյունիքի նահանգներն ամբողջությամբ, Վասպուրական ու Այրարատ նահանգների արևելյան գավառների մեծ մասը: Հետևաբար ինչպես, որ արաբական աղբյուրների «Արմենիան» ունի լոկ վարչական իմաստ, այնպես էլ 15-րդ դարից հետո «ընդարձակ առումով» «Ազերբայջան» վարչական միավորի հիշատակումը պարսից մատենագրության մեջ և պատմական վավերագրերում, հաճախ ցույց է տալիս միայն տվյալ վիլայեթի կամ շրջանի գուտ ֆինանսական-վարչական ենթակայությունը: Տես՝ Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 2, կալվածագրեր, պրակ առաջին (ԺԴ-ԺԶ դդ.), Երևան 1980թ., էջ 144:

Արդաբիլի, Մարաղայի, Սավուջ-Բուլաղի, Ղարաբաղի խանություններն ու մելիքությունները, որոնք տարածաշրջանի տարբեր պետական միավորների հետ հարաբերություններում հիմնականում անկախ էին:⁴Երևանի խանությունը 7500 մղոն²տարածք էր ընդգրկում⁵, որի կենտրոնԵրևանը հարուստ առևտրական քաղաք էր: Երևանի հարստությունն ու Երևանի բերդի անառիկությունը դեպի Երևան էին գրավում տարբեր նվաճողների ուշադրությունը: Թերևս դա էր պատճառը, որ Նադիր շահի սպանությունից հետո Երևանի խանությունը ենթարկվեց Իրանի գահի համար պայքարող տարբեր հավակնորդների հարձակմանը և Երևանի խանությունում մի քանի տարվա ընթացքում իշխանության գլուխ եկան մի քանի խաներ⁶ պայմանավորված վերոնշյալ պատերազմներով: Ի վերջո 1755թ.-ին Երևանի խանությունում իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց Հասան Ալի խանը, որից սկսած շուրջ կես դար իշխանությունը Երևանի խանությունում ժառանգաբար էր փոխանցվում: Հասան Ալի խանի իշխանության օրոք Երևանի խանությունը դարձավ Հերակլ 2-րդ թագավորի հարկատուն: Սակայն Երևանի խանության վերոնշյալ ժամանակաշրջանի պատմությունը հետազոտողների համար առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել, ինչի հետևանքով բազմաթիվ հարցեր, այդ թվում Երևանում իշխած խաների ցանկը հետազոտելու անհրաժեշտություն կա:Սույն աշխատանքում մենք

⁴ Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800թթ.), Երևան 1958, էջ 29:

⁵Encyclopedia iranica, The Persian khanate of Erevan, <http://www.iranicaonline.org/articles/erevan-1#ii>, 29.10.2016.

⁶ Երևանի խանությունում իշխանության գլուխ կանգնած անձանց սկզբնաղբյուրներում անվանում են տարբեր կոչումներով՝ «բեգլարբեգ», «խան», «սարդար» և այլն: Մեր հետազոտությունում մենք կօգտագործենք առավել տարածված «խան» անվանումը:

կներկայացնենք 1749-1755թթ.-ի ընթացքում Երևանի խանությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացները՝ Երևանում տեղի ունեցած իշխանափոխությունները՝ փորձելով տալ այդ տարիներին Երևանում իշխած խաների ցանկը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնց արդյունքում Երևանի խանությունը դարձավ Հերակլ 2-րդի հարկատուն:

1749թ.-ին Նեհիլ Մուհամմեդ խանը, որը, ըստ վրաց պատմիչ Պապունա Օրբելիանիի հաղորդման, Նադիր շահին դավաճանությամբ սպանողներից մեկն էր,⁷ հարձակվում է Երևանի վրա: Մուհամմեդ խանի այս արշավանքի մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնում թուրք պատմիչ Սուլեյման Իզզին, իր «Թարիխե Իզզի» աշխատությունում:⁸ Ըստ վերջինիս հաղորդման Երևանից Մուհամմեդ խանին ընդառաջ է դուրս գալիս Երևանում շահի ներկայացուցիչ Հասան Ալի բեյը:⁹ Սակայն Ուլուխանլու կոչված վայրում տեղի ունեցած ընդհարման ժամանակ Մուհամմեդ խանը հաղթում է Հասան Ալի բեյի զորքին և ձերբակալում վերջինիս:¹⁰ Երևանի Հուսեյն խանը ստիպված օգնության խնդրանքով դիմում է Քարթլիի թագավոր Թեյմուրազ 2-

⁷ Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան 1955, էջ 127:

⁸ Սաֆրաստյան Ա., Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա, Երևան 1964, էջ 186-213: Այս աշխատությունում այս դեպքերի ժամանակագրությունը ներկայացվում է եվրոպական 1752թ.-ը, հիջրայի 1162թ.-ը, որը համապատասխանում է եվրոպական 1748-1749թթ.-ին, ուստի պետք է կարծել, որ վերոնշյալ 1752թ.-ուղղակի վրիպակ է և որպես հիմք ընդունել հիջրայի 1162թ.ը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բնագրում նշված է հիջրայի թվականը:

⁹ Այդ ժամանակ Իրանում շահ էր հռչակվել Շահրուխը: Սակայն վերջինս չունեւ ուժեղ իշխանություն, ուստի Իրանում շարունակվում էր պայքարը գահի տարբեր հավակնորդների միջև:

¹⁰ Սաֆրաստյան Ա., Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա, Երևան 1964, էջ 203:

րդին (1744-1762թթ.)՝ վերջինիս խոստանալով 100000 դուռուշ: Վերջինս իր որդի Կախեթի թագավոր Հերակլ 2-րդի (1744-1762թթ. Կախեթի թագավոր, իսկ 1762-1798թթ՝ Քարթլի և Կախեթի թագավոր) հետ գործով գալիս է օգնության և Երևանի բերդի մոտ տեղի ունեցած մարտում հաղթում է Մուհամմեդ խանին: Այնուհետև Հերակլ 2-րդը, հետապնդելով Մուհամմեդ խանին, ավերում է նրա բնակավայրը,¹¹ ազատում Հասան Ալի բեյին, մեծ ավար ձեռք բերում և վերադառնում Երևան: Սակայն Երևանի Հուսեյն խանը Թեյմուրազ 2-րդին չի թողնում մտնել Երևանի բերդ՝ ասելով, որ դրա համար Թեյմուրազ 2-րդը պետք է շահից թույլտվություն ստանա: Թեյմուրազ 2-րդը չի շտապում հեռանալ և որոշ ժամանակ մնալով Երևանի խանության տարածքում՝ ավերի ու թալանի է ենթարկում տարբեր ցեղերի՝ սկսելով հավաքել նախապես իրեն խոստացված 100000 դուռուշը:¹² Վրաց պատմիչ Պապունա Օրբելիանին նկարագրելով Թեյմուրազ 2-րդի և Հերակլ 2-րդի արշավանքը Մուհամմեդ խանի դեմ, նշում է, որ Մուհամմեդ խանին հաղթելուց հետո վրաց արքաների հետ Թիֆլիս է գնում նաև Երևանի խանը, որի հետ վրաց թագավորները Թիֆլիսից Երևան ուղարկեցին Զազա Թարխանիշվիլուն, իբրև հյուրընկալի (մեյմանդար):¹³ Այս ամենից կարելի է ենթադրել, որ չնայած

¹¹Մուհամմեդ խանի բնակավայրի վերաբերյալ տարբեր են աղբյուրների հաղորդած տեղեկությունները. ըստ Մուլեյման Իզգի Մուհամմեդ խանի բնակավայրը Քերնեյն էր, սակայն հեղինակը չի նշում բնակավայրի գտնվելու վայրը: Տես՝ Սաֆրաստյան Ա., նշված աշխատություն, էջ 203: Ըստ վրաց պատմիչ Օման Խերխետուլիձեի Մուհամմեդ խանը Երևանի մոտ պարտվելուց հետո փախավ Ղարաբաղ, քանի որ այնտեղ Խորվիրապի (Խարզվիրաբի) բերդն ամրացրել էր: Մեկնաբանելով Օման Խերխետուլիձեի հաղորդած տեղեկությունը՝ Լ. Մելիքսեթ-Բեկը նշում է. « *Ասել է հին Արտաշատի տեղում, որ, ի հարկե, ոչ մի կերպ չի կապվում Ղարաբաղի (կամ գուցե Ղարաղաղի) հետ, ինչպես Օման Խերխետուլիձեն է նշում: Հավանական է, որ այստեղ գուրծ ունենք մի ինչ որ lapsus-ի հետ»*: Տես Մելիքսեթ-Բեկ Լ., նշված աշխատություն, էջ 172, էջ 181:

¹² Սաֆրաստյան Ա., նշված աշխ. էջ 203:

¹³ Մելիքսեթ-Բեկ Լ., Նույն տեղում, էջ 130:

Երևանի խանը վրաց թագավորներին թույլ չի տալիս մտնել Երևանի բերդը, այնուամենայնիվ նրանց միջև որոշակի համաձայնություն էր կայացել և Զազա Թարխնիշվիլին ամենայն հավանականությամբ պետք է լիներ Երևանում վրաց թագավորների ներկայացուցիչը և պաշտպաններ նրանց շահերը: Որոշ ժամանակ անց Ատրպատականի Ազատ խանը հարձակվում է Երևանի վրա: Երևանին տիրելու համար Ազատ խանի և Հերակլ 2-րդի միջև սկսվեց համառ պայքար, որի ընթացքում նրանցից յուրաքանչյուրը հաջողության դեպքում իր ներկայացուցչին էր դնում Երևանում: Պապունա Օրբելիանիի հաղորդման համաձայն Ազատ խանի առաջին հարձակման ժամանակ Երևանի խանը օգնության խնդրանքով դիմում է վրաց թագավորներին:¹⁴ Օգնության դիմաց Երևանի Հասան Ալի խանը խոստանում է նրանց հարկ վճարել:¹⁵ Հերակլ 2-րդը օգնության է գալիս: Երևանի մոտ բախում է տեղի ունենում որն ավարտվում է Ազատ խանի զորքի պարտությամբ:¹⁶ Այսպիսով Հերակլ 2-րդը կարողացավ Ազատ խանին խանգարել տիրելու Երևանին, որից հետո «Երևանի բեզլարբեկությունը շնորհում է Աբդուլ խանին»:¹⁷ Հերակլ 2-րդը Երևանում զորք թողնելով հեռանում է:¹⁸ Այնուհետև շարունակելով նկարագրել Երևանի շուրջ ընթացող իրադարձությունները Պապունա Օրբելիանին նշում է, որ 1752թ.-ին Հերակլ 2-րդը Զեյդալ բեկին ուղարկում է Երևան՝ Ազատ խանի հետ բանակցելու, քանի որ Ազատ խանը մինչ այդ Հերակլ 2-րդի կողմից Երևանի խան

¹⁴Մելիքսեթ-Բեկ Լ., նույն տեղում, էջ 127:

¹⁵Բարոն Օ. Հակաստիաուզենի ճամփորդությունից մի գլուխ, Կռունկ հայոց աշխարհին, Տփլիս 1862թ., էջ 278:

¹⁶Մելիքսեթ-Բեկ Լ., նույն տեղում, էջ 136-137:

¹⁷Նույն տեղում, էջ 138:

¹⁸Бутков П., Материалы для новой истории Кавказа, ч. 3, хронологический и алфавитный указатели, составленные Л. Броссе, Санктпетербург 1869, ст. 88.

նշանակված Աբդուլ խանին իր մոտ էր կանչել ու ձեռքակալել՝ նրա փոխարեն խան նշանակելով Հասան Ալի խանին «որը նրանից առաջ էր խան»: Այնուհետև Պապունա Օրբելիանին հայտնում է հետևյալը. «Ազատ խանի չափարն եկավ, արքաներին մատուցեց դաշինքի և հաշտության գիրը»:¹⁹ Ազատ խանի մի շարք հրամանագրերին ծանոթանալով հասկանալի է դառնում, որ այս դաշինքից հետո Երևանի խանությունը մնացել է Ազատ խանի իշխանության ներքո: Այդ հրամանագրերին ծանոթանալով նաև կարողանում ենք մոտավոր հասկանալ թե որքան ժամանակ է Ազատ խանը իշխել Երևանում և այդ ընթացքում ինչպիսին են եղել նրա հարաբերությունները Էջմիածնի կաթողիկոսների հետ: 1752թ.-ի հրամանագրով Ազատ խանը Մինաս կաթողիկոսին (1751-1753թթ.) տեղեկացնում է, որ նրա խնդրանքներն իրականացնելու համար համապատասխան հանձնարարականներ է սովել:²⁰ Հրամանագրում չի հայտնվում թե ինչպիսի խնդրանքների մասին է խոսքը, սակայն կաթողիկոսի խնդրանքը չմերժելը խոսում է կաթողիկոսի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի մասին: Նույն տարվա մայիսին Մինաս կաթողիկոսին ուղղված մեկ այլ հրամանագրով Ազատ խանը տեղեկացնում է, որ Մելիք Հակոբջանի²¹ միջոցով նրա խնդրանքը ստացել է և Երևանի բնակչության անդորն ապահովելու համար Երևանի բեկլարբեկ է նշանակում Խալիլ բեկին՝ հանձնարարելով նրան լավ վարվել Երևանի բնակչության

¹⁹Մելիքսեթ-Բեկ Լ., էջ 142:

²⁰Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1323:

²¹Մելիք Հակոբջանը Երևանի նշանավոր հայ մելիքներից էր, ով մելիք Մկրտումի հետ իր կալվածքներին և հարկային արտոնություններին վերաբերվող իրավունքները ստացել էր Նադի շահի հրովարտակով: Տես Հայոց պատմություն, հատոր երրորդ, գիրք առաջին, Երևան 2010, էջ 58:

հետ:²² Ըստ Շահխաթունյանցի Խալիլ խանը Երևանում իշխել է մինչև 1755թ.-ը:²³1754թ.-ի ապրիլին Ազատ խանը նոր հրամանագրով հաստատում է Ստամբուլից Երևան եկող Ալեքսանդր կաթողիկոսի (1754-1755թթ.) կաթողիկոսական իրավունքները:²⁴Այնուհետև 1755թ.-ի սեպտեմբերին մեկ այլ հրամանագրով Ազատ խանը Երևանի բեկլարբեկին և մյուս պաշտոնյաներին հրահանգում է, որ ընդառաջելով Ալեքսանդր կաթողիկոսի խնդրանքին, այն հարկերը, որոնք նախկինում կրճատվել էին, այժմ ևս չգանձվեն:²⁵ Այսպիսով Ազատ խանը, մի քանի տարի իշխելով Երևանում, որոշակի հարաբերություններ է ունեցել նաև Էջմիածնի կաթողիկոսների հետ՝ որպես տեղի իշխող հաստատելով նրանց կաթողիկոսական իրավունքները, կարգավորելով նրանց հարկային արտոնությունները, պատասխանելով նրանց խնդրագրերին:

Խալիլ խանից հետո 1755թ.-ից որպես Երևանի խան է հիշատակվում Հասան Ալի խանը, ում կառավարման տարիները Շահխաթունյանցի մոտ նշվում են 1755-1762թթ.:²⁶ Հասան Ալի խանի 1755թ.-ից Երևանում իշխելու մասին է վկայում նրա հրամանագրերից մեկը: Այդ հրամանագիրը նա հրապարակել է ի պատասխան Ալեքսանդր կաթողիկոսի խնդրագրի և այդ հրամանագրով Երևանի խանության թվով 17 վանք, ավերված

²²Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ.1326:

²³ Շահխաթունյանց՝, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հատ.2, Էջմիածին 1842, էջ 139:

²⁴Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1327:

²⁵Նույն տեղում,, վավ. 1339:

²⁶ Շահխաթունյանց՝, նույն տեղում, էջ 139:

լինելու պատճառով ազատվում են ջիզայի²⁷ հարկից:²⁸Սակայն Հասան Ալի խանը չի իշխել մինչև 1762թ.-ը: Դրա մասին է վկայում Հուսեյն Ալի խանի, որպես Երևանի բեկլարբեկ, հիջրայի 1173թ.-ին, որը համապատասխանում է եվրոպական 1759-1760թթ.ին, արձակած մի հրովարտակ, որը գրվել էր Երևանի Անապատի վարդապետ Ղազարի խնդրագրի հիման վրա և վերաբերվում էր եկեղեցական կալվածքներին:²⁹

Այսպիսով Իրանում կենտրոնական իշխանության թուլացումից և Երևանի խանության կիսանկախ կարգավիճակ ձեռք բերելուց հետո Երևանի խաներ են եղել հետևյալ գործիչները՝ Հուսեյն խան, որն ինչպես տեսանք, որպես խան է հիշատակվում Փիր Մուհամմեդ խանի 1749թ.-ի արշավանքի ժամանակ, այնուհետև Ազատ խանի 1750թ.-ի արշավանքի ժամանակ, որպես խան է հիշատակվում Հասան Ալի խանը, որին նույն տարում փոխարինում է Աբդուլ խանը 1750-1752թթ., Հասան Ալի խանը կրկին գալիս է իշխանության գլուխ 1752թ.-ին, սակայն շուտով նրան փոխարինում է Խալիլ խանը 1752-1755թթ., 1755թ.-ից կրկին Հասան Ալի խանը, որին փոխարինում է իր եղբայր Հուսեյն Ալի խանը:

²⁷Ջիզայն ոչ մուսուլման ռայաթներից (քրիստոնյաներ և հրեաներ) գանձվող գլխահարկ էր, որ կանխիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս տղամարդուց: Յուրաքանչյուր գյուղից գանձվող ջիզայն հաշվված էր և ընդհանուր գումարով հարկային մատյաններում գրանցված՝ տվյալ գյուղական համայնքի անունով: Տես ԿոստիկյանՔ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, պրակ չորրորդ, Երևան 2008թ., էջ 110:

²⁸Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1338:

²⁹Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 427:

YEREVAN KHANATE IN THE 1749-1755S

(summary)

Hakobyan Vahagn

After the assassination of Nadir Shah fights for throne in Iran had their negative impact on Yerevan Khanate as well. It was regularly subjected to attacks by various pretenders to the throne of Iran. In the 1749-1755s Georgian King Heraclius II and Azat Khan, who dominated the majority of Atrpatakan began to fight for Yerevan khanate. During this struggle success for both sides was variable, due to which Yerevan was under either Azat Khans's or Heraclius II's reign, who, in their turn, appointed their candidates as the Governor, Khan of Yerevan. The edicts issued by those candidates that are stored in the corresponding funds of Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, refer to the Echmiadzin monastery. The study of these edicts provides an opportunity to get to know the relationship of the Catholicos of Etchmiadzin and Yerevan khans, as well as to form the list of khans ruled in Yerevan in the 1749-1755s, which has not been fully explored by other researchers so far.

ЕРЕВАНСКОЕ ХАНСТВО В 1745-1755ГГ.

(Резюме)

Акобян Ваагн

После убийство Надир-шаха битва за престол в Иране оказало негативное влияние и на Ереванское ханство. Оно регулярно подвергалось нападениям различных претендентов на трон Ирана.

В 1749-1755 годах грузинский король Ираклий II и Азат-хан, доминирующий над большей части Атрапакана, начали бороться за Ереванское ханство. Во время этой борьбы успех для обеих сторон был переменным, вследствие чего Ереван находился под господством Азат-хана или Ираклия II, которые, в свою очередь, назначили своих кандидатов в качестве правителей-ханов в Ереванском ханстве. Указы, выданные вышеупомянутыми кандидатами хранятся в соответствующих фондах Института древних рукописей имени Месропа Маштоца и относится к монастырю Эчмиадзин. Изучение этих указов дает возможность ознакомиться отношениям Католикоса Эчмиадзина и ереванских ханов, а также составить список ханов, правивших в Ереване в 1749-1755 годах, которые еще не были полностью изучены другими исследователями.